

374. Կոթող, և մարմարից շրջված վիճակում: Վրան՝ կամարաձև 7 առղ.

Здесь покоятся прахъ/ возлюбленной/ матери и жены Елизаветы /
Давидовны/ Альянаки,/ скончавшейся 10 января 1904г.

Մասոթ. Ղրիմի Ալտնակյան նշանավոր գերդաստանի ներկայացուցիչներից է:

375. Տապանաքար, գորշ գրանիտից, վրան՝ խաչ, որի ամակ՝ 3 առղ.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆԱԿ/ ԳՐԻ.ՔՈՐ/ ՊՈՂՏԱՆՈՎԻ:

Մասոթ. Կիմագրում աչքի է զարնում Ա տառի յուրօրինակ գրությունը:

376. Տապանաքար, վրան՝ միաթև խաչ, սաորե՝ 5 առղ.

ՀԱՆԳԻՍ/ ՄԱՀՏԵՍԻ ԱՆՆԱՅԻ/ ՈՐ Է ԿԻՆ ՄԱՐՏԻՐ/ՈՍԻ ՄԻԱՍՆԻՔԵԱՆԻ. ՎԱԽՆ. 1876, 4 ՑՈՒՆՎ.

377. Տապանաքար, նույնաաիպ, նախորդի կողքին, փոքր-ինչ թեքված: Վրան՝ 4 առղ.

ՀԱՆԳԻՍ/ ՄԱՀՏԵՍԻ ՄԱՐՏ/ԻՐՈՍԻ ՄԿՐՏԻՉԵԻՈՎ ՄԻԱՍՆԻՔԵԱՆ./ ՎԱԽՆ. 1866 Ա-ՄԻ, 12 ԱՊՐ.

378. Տապանաքար, կոարկած. պահպանվել է սաորին մասը: Վրան՝ եղծված 4 առղ.

Ի ԱՅՍ ՏԱՊԱՆ.../ՅԻ, ԴԱՏԵՐ ԱՌՈՊ/ ՕՂԼՈՒԻ, ՈՐ ՀԱՆԳԻ.../ ՄԱՅԻՍԻ:

Մասոթ: Մեծահարուսա Հարություն Արարյանի դուսարն է:

379. Կոթող, գորշ գրանիտից, քառակող, դերադանց մշակված շինաքարերով: Մեր այցի ժամանակ (1970 թ.) ջարդուաված և շրջված էր փոսի մեջ: Բեկորների համադրումից կարելի է ընթերցել.

ДОРОГОМУ МОЕМУ ОТЦУ/ СИМЕНУ ЕГОРОВИЧУ/ СПЕНДІАРОВУ/ ВЕЧНАЯ
ЕМУ ПАМЯТЬ.

380. Տապանաքար, գորշ գրանիտից: Վրան՝ 5 առղ.

ՀԱՆԳԻՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԻ ԿԱՐՊԵՏԵԱՆ/ՎԱՆԼԵՅԱՆԻ/ ՎԱԽՆ. 15 ՄԱՐՏԻ 1874/, Ի
ՀԱՍԱԿԻ 75 ԱՄԱ.8:

ԿՐԱՍՆՈՊԵՐԵԿՈՊՍԿ ԵԽ ԶԱՆԿՈՅ

Կրասնոպերեկոպսկ նորակառույց քաղաքի երկրագիտական թանգարանի մուաքի մոա դրված հուշասալին նշված են գերմանացիների դեմ մարանչած զինվորների անունները, որոնց մեջ կային երկու հայորդիներ.

381.

ա) ЛЕЙТЕНАНТ ГЕВОРКЯН ГАЙК ЗУРАВОВИЧ.

բ) ...МИНАСЯН САМСОН ДЖАНКИРОВИЧ.

Հնագույն հուշարձաններ այսաեղ չկան:

Զանկոյը Ղրիմի երկաթուղային ամենախոշոր հանդուցակետն է: Տեղացիների ասելով՝ հայոց գերեղմանոցը ոչնչացել է զերմանացիների ոմրկոծության ժամանակ: Այժմյան քաղաքային

Հանդստարանը նոր է. այն բաժանված է երկու մասի՝ քրիստոնեական և մուսուլմանական։ Քրիստոնեական մասում է դժուվում միակ հայի՝ կարմիր գրանիտից վերջերս կառուցված հոյակապ կոթողը՝ դիմաքանդակով, որի սառը փորադրված է։

382.

ВРАЧ-ХИРУРГ/ МИХАЛЬЯНЦ/ АШОТ АТАНАСЕВИЧ./ СГОРАЯ САМ/, СВЕТИЛ ДРУГИМ.

ՍՈՒԴ-ԱԿ (ՍՈՒՐՈՃ, ՍՈԼԴԵՅ, ՍՈՒԳԴԵՅ, ՍՈՒՂՏԱ)

Մինչև Կաֆտյի ծագկումը Սուդակ-Սուրոճը մեծ դեր է կատարել միջազդային առեարի և - փոխանակության ասպարեզում։ Սուրոճ քաղաքի անունով ամրող Ղրիմը կոչել են Սուրոժյան թերազդղի⁸⁵։ Լ. Ս.Խաչիկյանը բաղմաթիվ սկզբնաղբյուրների հիման վրա ապացուցել է, որ ոռուսական տարեդրքերում հիշատակվող «Սուրոժի Հյուրերը» աղդությամբ եղել են հայեր⁸⁶։ Նրանք Կաֆայից և Սուրոժից Մոսկվա ժամանած վաճառականներ էին, որոնցից 10-ը մասնակցել են Կուլիկովյան ճակատամարտին և արժանացել բարձր դնահատանքի⁸⁷։

Սուդակը աշխարհին հայանի է նաև հակայածավալ ջենովական ամրոցով։ Պարսպապատերից գուրս, ծովափնյա ժայռերի ստորոտին առ կա է 12 առաքյալների անունը կրող թաղածածկ մի եկեղեցի (XIII-XIVդդ.), որի կառուցումը վերապրվում է զրիմահայերին։ Ձենովացիների օրոք, քաղաքից փոքր-ինչ հեռու՝ սարալանջին, սուրոժցի Հայերը կառուցել են Ս. Գեորգ վանքը, որն այժմ դոյաակում է ավերակների անսպով։ Երբեմնի հայաշատ այս բնակավայրում⁸⁸ Մ. Բժշկյանի այցի ժամանակ հայեր չեն ատրել։ Նրանք բնակվելիս են եղել մերձակա զյուղերից մեկում, ուր ունեցել են Ս.Ստվածածին եկեղեցին։ Ս. Գեորգ վանքից Մ. Բժշկյանը վերծանել ե բնդորինակել է հետեւյալ միակ արձանադրությունը։

383.

Յիշաակ է սուրբ Խաչս իղմիրցի Անդրէասի որդի Եղիային։

Հրատ. Բժշկյան. 318:

1985 թ. երկրորդ անդամ լինելով Սուդակի ամրոցում, արդելավայրի վարիչ Օ. Ի. Իվանովան մեղ ցույց ավեց աեղի թանդարանի ցուցարահում դրված նորահայա մի խաչքար՝ դեղնավուն կրաքարից, որի խաչանշանի առակ կար 3 առող։

384.

ԿԱՆԿՆԵՑԱԿ ՍԲ/ԽԱԶՍ ՅԻՇԱՏԱԿ/ ԴԱՎԻ ԱՐՄԵՆԻ, ՆՈՐԵԱՑԻՆ։

85 Լ.Ս.Խաչիկյան, Հայերը Բին Մոսկվավում.... էջ 63

86 Նույն տեղում էջ 72։

87 Նույն տեղում, էջ 66

88 А.Л. Якобсон, Средневековый Херсонес XII-XIV вв. / в Серии: Материалы и исследование по археологии СССР/. N.17 М.-Л., 1950, гл. I Տեսանկան՝ И.А.Баранов, Судакская капелла, датировка и атрибуция, табл. VIII, Тезисы докладов, 1982, с. 276.